

ՇՔԱՆՇԱՆՆԵՐՈՒ ՇՆՈՐՀՈՒՄ ԵՒ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ԻՍԹ-ԼՈՍ ԱՆՃԵԼԸՍԻ Ս. ՍԱՐԳԻՍ

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՅ ԱՌԱՔ. ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԷՋ

Կիրակի, Հոկտ. 12-ին, Արեւմտեան թեմի բարեխնամ առաջնորդ Գերշ. Ս. Յովնան արքեպս. Տէրութեան Սրբոց Թարգմանչաց փոսի առթիւ Սուրբ Պապարագ մապոյց Իսթ Լոս Անճելլոսի Ս. Սարգիս Հայց. Առաք. եկեղեցւոյ մէջ:

Առաւօպեան ժամերգութենէն ետք, «Խաչապուրեան» դպրաց դասի կողմէ «Հրաշափառ» շարականի երգեցողութեամբ, ղեկավարութեամբ Բրշ. Սյունիան սրկ. Կէօգիմեանի եւ երգեհոնահարութեամբ Գեորգ Կիլիզլեանի, սկսաւ Սուրբ Պապարագի արարողութիւնը:

Սուրբ Պապարագի ընթացքին Սրբազան Հայրը առընթերակայութեամբ եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Արժ. Ս. Նարեկ աւագ քին. Մապարեանի եւ Արժ. Ս. Սյունիան քին. Տէր-Գեորգեանի, սարկաւագ ձեռնադրեց Յակոբ Ծերունեանը, Թորոս Մկրտիչեանը եւ Տէնիս Թաքսեանը: Կիսասարկաւագ ձեռնադրեց Սիմոն Աճիլաճօղլուն եւ Վրամ Ծերունեանը եւ ապա դպիր Անտիս Թէօփեանը, Գեորգ Կիլիզլեանը, Կարայիս Աֆլասօղլուն, Սարգիս Տանաճեանը, Արի Օհանեանը, Ասապուր Զիլինկիրեանը, Հրայր Կէօպլը, Տիգրան Գորեանը, Յովսէփ Եփրեմեանը, Մասիս եւ Արարապ Արիկները, Յովսէփ Արպըշը, Գաբրիէլ Յակոբեանը, Վահան Պահարեանը, Գեորգ Մապարեանը եւ Կարօ Կուրպիկեանը:

«Հայր մեր»-էն առաջ, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Հայրապետի շնորհած Կոնդակներու ընթերցումէն ետք, առաջնորդ Սրբազան Հայրը «Ս. Ներսէս Շնորհալի» շքանշաններով զարդարեց Բրշ. Յակոբ Ծերունեանի, Տոքթ. Արթո Հրսան Խաչերեանի եւ Տիար Սեպուհ Թումազեանի կուրծքերը:

Սրբազան Հայրը շնորհաւորեց Ձեռնադրեալները եւ յանձնարարեց անոնց Քրիստոսի յոյժ փարածել հաւաքացեալներուն մէջ, յարկապէս երիտասարդները ներգրաւել հոգեւոր կեանքի՝ Սուրբ Եկեղեցւոյ հովանիին ներքեւ, եւ անսակարկօրէն ծառայել Աստուծոյ Տունը կեանքի մնայուն վիճակի մէջ պահելու:

Առաջնորդ Սրբազան Հայրը գնահատեց Ս. Սարգիս Հայց. Առաք. եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Արժ. Ս. Նարեկ աւագ քին. Մապարեանի ծառայութիւնը եւ այդ առթիւ իրեն նուիրեց Քրիստոսի 12 աշակերտները պարկերոդ սրբապարկեր մը:

Սուրբ Պապարագի աւարտին եկեղեցւոյ Մամուլեան Սրահին մէջ Սրբազան Հօր կապարած սեղանի օրհնութեամբ սկսաւ ճաշկերոյթ-յայտագիրը: Օրուան հանդիսավար, Ծխական Խորհուրդի եւ դպրաց դասի արեւնապետ Բրշ. Յակոբ սրկ. Ծերունեան, դպրաց դասի վարիչ Բրշ. Սյունիան սրկ. Կէօգիմեան եւ երգչախումբի արեւնադպիր Ասապուր Զիլինկիրեան սրտի խօսքերով հանդէս եկան՝ շնորհակալութիւն յայտնելով բոլորին ծառայութեանց եւ զօրակցութեան համար:

Գեղարունստական յայտագրին մաս կազմեցին ասմունքող Օր. Ժալիտ Չեփքինեան իր պարզ եւ քաւարիչ ելոյթով եւ Տէր եւ Տիկին Մանուէլ եւ Սիւզաննա Եփրեմեաններ՝ իրենց Աստուածապուր ձայնով բանի մը երգ կատարելով: Յայտագրի ընթացքին Կեղի ունեցաւ նաեւ յուշանուէրներու բաշխում: Արժ. Ս. Նարեկ աւագ քին. Մապարեան իր շնորհակա-

լուծիւնը յայտնեց Սրբազան Հօր օրհնաբեր այցելութեան, քաջալերանքին, ինչպէս նաև դպրաց դասին եւ բոլոր մասնակիցներուն, անոնց Աստուծոյ Տան բերած նուիրումութեան համար:

Առաջնորդ Տ. Յովնան արքեպս. իր եզրափակիչ խօսքով գնահատեց բոլորին նուիրեալ ծառայութիւնը, եկեղեցաշէն աշխատանքը եւ ըստ. *«Ես ձեր նուիրումութեան մէջ կը տեսնեմ գաղութի հոգեւորականներ, որ կ'առաջնորդէ մեզ փնտրելու եւ գտնելու մեր սրտի խորքը եղած հաւատքը, որ մեզ առանկ եւս կը զօրացնէ Աստուծոյ փառքը հիսուսի եւ մեր ժողովուրդին հոգևոր կարիքներուն հասնելու: Վարձքերնիդ կատար, Աստուած ձեր հետ ըլլայ»:* Ամեն:

«ԿՈՄԻՏԱՍ» ԵՐԳՉԱՆՈՒՄԻ ԱՆԴԱՄԱԿԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՄԱՔՈՅԹԸ

Հոկտեմբեր 23-ին, երեկոյեան ժամը 8. 00-ին, Արեւմտեան թեմի բարեխնամ առաջնորդ Գերշ. Տ. Յովնան արքեպս. Տէրաբեռեան մասնակցեցաւ Ս. Պետրոս եկեղեցւոյ «Կոմիտաս» երգչախումբի անդամներու փարսկան աւանդական հաւաքոյթին:

Ներկայ էին եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Արժ. Տ. Շնորհք քինյ. Տէմիրճեան եւ երեկինը, Արժ. Տ. Զաւէն աւագ քինյ. Տէմիրճեան եւ երեկինը, Ծխական Խորհուրդի արքեպեպոս Տիար Ժազ Տէրաբեռեան, երգչախումբի արքեպեպոս Տիար Վարդան Վարդանեան, ղեկավար Տիար Մելիք Կապրիէլով, վարչակազմը եւ անդամները իրենց ընտանիքներով:

Տ. Շնորհք քահանայ ողջունեց բոլորին ներկայութիւնը եւ յարկապէս Սրբազան Հօր օրհնաբեր այցելութիւնը:

Ընթրիքի ընթացքին կարճ յայտագրով հանդէս եկան երգչախումբի ղեկավարը՝ դաշնամուրի վրայ քանի մը ժողովրդական երգերով, նաև Օրիորդ Իրեն Կապրիէլով եւ Օրիորդ Թանիա Թուրաճ՝ երգով:

Տիար Արէթ Վարժապետեան իր հեր, ին ողջունեց Սրբազան Հօր ներկայութիւնը եւ քաջալերանքը հանդէպ երգչախումբին: Անդրադարձաւ 20 փարտուան կենսւք ունեցող երգչախումբի գործունէութեան եւ յետագայի ծրագիրներուն մասին:

Առաջնորդ Սրբազան Հայրը գնահատեց դպրաց դասը, Պոլսահայերու աւանդապահութիւնը, հաւատքը եւ նուիրեալ ծառայութիւնը Հայց. Առաք. Եկեղեցւոյ:

Առաջնորդ Սրբազան Հայրը իր խօսքին մէջ ըստ. *«Կոմիտաս Վարդապետի կենսութեան մէջ իրական ներկայութիւն կը դարձնէր դուք՝ ձեր Աստուածախաճոյ նուիրումութեամբ թէ՛ Եկեղեցւոյ եւ թէ՛ ձեր ընտանիքներու հիմքը կը զօրացնէք, կանգուն եւ պայծառ պահելով Աստուծոյ Տունը, որ ձեր երկրորդ կարևոր տունն էր դարձուցած: Օրհնեալ ըլլաք եւ վարձքերնիդ կատար»:* Ապա մօտ վեցամսեայ գործունէութեան եւ ապագայի ծրագիրներու մասին արտայայտուելէ ետք, Սրբազան Հայրը «Պսակի» աղօթքով օրհնեց ներկաները: